



Եզրակացություն

Բարոյագիտության հիմնաւորման վերոյիշեալ չորս տարբերակները որոշ մանրամասնութեամբ ներկայացնելէ ետք, կարելի է եզրակացնել, որ անոնցմէ երեքը այնքան վիճելի ու քննադատելի են, որ կարելի է նոյնիսկ զանոնք բարոյագիտութեան մարզէն հեռացնել:

Կը մնայ միայն **Ի. Կանտի** բարոյագիտութեան հիմնաւորման տարբերակը, որ հակառակ բացարձակ հիմնաւորման վիճելի իր գաղափարին, հոն կարելի է որոշ յստակութեամբ եւ «*լաւն ու բարի*»-ի էական սկզբունքով՝ բարոյագիտութեան հիմնաւորում մը նկատել:

Կանտի պարտագիտական բարոյագիտութեան մասին, ինչպէս նշեցինք, աւելի մանրամասն՝ «Բարոյագիտութեան Տեսութիւններ» Մաս – 5ի մէջ (տե՛ս Էջ 160):



ՀԱՄՈՋԻՉ ՀԻՄՆԱԻՈՐՈՒՄ

Ինչպէս նշեցինք (տե՛ս Էջ 141), բարոյագիտութեան հիմնաւորման ծրագիրը պէտք է ունենայ՝ տոկուն, ապահով ու անսխալական հիմք, ինչպէս նաեւ զինուած ըլլայ կասկածապաշտութեան (սկեպտիկութեան), յարաբերապաշտութեան եւ ոչնչապաշտութեան դէմ՝ մերժման կարելիութիւններով: Ասոնց կողքին, բարոյագիտութեան տեսութիւնները համոզիչ հիմնաւորում մը ունենալու համար հարկ է նախ նկատի ունենալ՝ *լաւն ու բարիի* սկզբունքը ապա ասոր հետ անմիջականօրէն առնչուած՝ *անհատական ինքնավարութիւնը* կամ *ազատութիւնը*:

Բարոյագիտութեան հիմնաւորման ծրագրի վերոյիշեալ բաղկացուցիչ մասերը յիշելէ ու անոր համոզիչ ըլլալը քննարկելէ ետք, տակաւին պէտք է աւելցնել, որ մենք կարելիութիւնը ունինք՝ այլ հիմնաւորման բոլոր ծրագրերը բացասական իմաստով քննադատութեան ենթարկելու ու զանոնք որպէս «ոչ-համոզիչ» նկատելով՝ մերժելու:

1. Լաւն ու բարիի սկզբունքը.-

Լաւն ու բարիի սկզբունքը կրնայ յարաբերական կամ բացարձակ ըլլալ: Այս սկզբունքը ինքնին յարաբերական է օրինակ՝ զգացումի բարոյագիտութեան պարագային (ինչպէս՝ Շոպենհաուրի ու Ռաուլսի մօտ): Այս սկզբունքը կրնայ նաեւ բացարձակ ըլլալ, օրինակ պարտագիտական բարոյագիտութեան պարագային (ինչպէս՝ Կանտի մօտ):